

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը դատապարտում է ցանկացած բռնարարք կամ հակաօրինական գործողություն, հատկապես եթե դրանք իրականացվում կամ կարող են իրականացվել նախընտրական քարոզչության ժամանակահատվածում:

Քարոզարշավին մասնակցող բոլոր թեկնածուների համար ստեղծված են հավասար պայմաններ իրենց ծրագրերն ու գաղափարներն ընտրողներին անարգել հասցնելու համար:

Հանձնաժողովը հորդորում է ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին և Երևանի ավագանու անդամի թեկնածուներին գործել օրենսդրության սահմաններում, պահպանել նախընտրական քարոզչության կազմակերպման սահմանված կարգը, իսկ իրավապահ մարմիններին՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ ընտրությունների բնականոն ընթացքն ապահովելու համար: